ԽՈՒՄԲ 7

161 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. **Կայանումն արգելվում է**

1. Կամուրջների, Էստակադների եւ ուղեկամուրջների վրա:
2. Կամուրջների, Էստակադների եւ ուղեկամուրջների տակ:
3. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 3

---

2. **Թույլատրվու՞մ է արդյոք ուղեւոր իջեցնել ճանապարհի այն տեղում, որտեղ եզրաքարի վերին մակերեսին գծված է դեղին հոծ գիծ եւ տեղադրված է «Կանգառն արգելվում է» նշանը:**




1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում
4. Թույլատրվում է միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 2

---

3. Ազդու՞մ է արդյոք արգելող նշանը ճանապարհի այն հատվածի վրա, որտեղ կանգառ է կատարել վարորդը:



1. Ազդում է
2. Չի ազդում

Պատ.՝ 1

---

4. Երկաթուղային գծանցներից ի՞նչ հեռավորության վրա է արգելվում տրանսպորտային միջոցների կայանումը:

1. 300 մ
2. 150 մ
3. 100 մ
4. 50 մ
5. 25 մ

Պատ.՝ 5

---

5. Թույլատրվու՞մ է արդյոք տվյալ դեպքում կանգ առնել՝ ուղեւոր իջեցնելու համար:




1. Թույլատրվում է, եթե դա չի խոչընդոտի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթեւեկությանը
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---


6. Վարորդներից ո՞րն է պարտավոր կանգ առնել:



1. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**
2. Ավտոբուսի վարորդը
3. Երկու վարորդներն էլ

Պատ.՝ 1

7. Տվյալ ճանապարհային գծանշումը թույլատրում է երթեւեկել



1. Միայն դեպի ձախ:
2. **Դեպի ձախ եւ հակառակ ուղղությամբ:**
3. Միայն հակառակ ուղղությամբ:
4. Ուղիղ, ձախ եւ հակառակ ուղղությամբ:

Պատ.՝ 2

8. **Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում կայանել տվյալ ճանապարհային նշանի ազդեցության գոտում:**



1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին
2. **Այն տրանսպորտային միջոցներին, որոնք վարում են հաշմանդամները, եւ միացված հաշվիչով տաքսիներին**

Պատ.՝ 2

---

9. **Ի՞նչ է նշանակում տվյալ ճանապարհային գծանշումը:**



1. Ուղեւորներ նստեցնելու-իջեցնելու տեղ
2. **Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետ**
3. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի եւ տաքսիների կայանման տեղ

Պատ.՝ 2

---

10. Ի՞նչ է ցույց տալիս հորիզոնական գծանշման դեղին հոծ գիծը:



1. **Այն տեղը, որտեղ արգելվում է տրանսպորտային միջոցների կանգառը եւ կայանումը**
2. Այն տեղը, որտեղ թույլատրվում է կանգառ կատարել՝ ուղեւորներ իջեցնելու կամ տրանսպորտային միջոցը բեռնաթափելու համար
3. Այն տեղը, որտեղ արգելվում է տրանսպորտային միջոցների կայանումը

Պատ.՝ 1

---

11. Թույլատրվու՞մ է արդյոք վարորդին հատել տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները նշող գծանշման հոծ գիծը:




1. Արգելվում է
2. **Թույլատրվում է:**

Պատ.՝ 2

---

12. Սլաքներով նշված ո՞ր ուղղություններով է թույլատրվում երթեւեկությունը:




1. **Միայն ուղիղ**
2. Դեպի ձախ եւ հակառակ ուղղությամբ
3. Ուղիղ, դեպի ձախ եւ հակառակ ուղղությամբ

Պատ.՝ 1

---

13. Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:



1. Հետիոտնային անցում, որտեղ երթեւեկությունը կարգավորվում է լուսացույցով
2. **Այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է ճանապարհի երթեւեկելի մասը**
3. Այն տեղը, որտեղ հետիոտնային արահետը հատում է ճանապարհի երթեւեկելի մասը

Պատ.՝ 2

---

14. **Քանի՞ գոտի ունի ճանապարհը, որտեղ հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանվում են կրկնակի հոծ գծերով:**



1. Երկու գոտի
2. Երկու կամ երեք գոտի
3. Երեք գոտի
4. **Չորս եւ ավելի գոտիներ**

Պատ.՝ 4

---

15. **Ի՞նչ են նախազգուշացնում երթեւեկելի մասի վրա գծանշված սլաքները:**




1. Նախազգուշացնում են վարորդին ճանապարհի վտանգավոր հատվածին մոտենալու մասին
2. **Նախազգուշացնում են երթեւեկության գոտու վերջին մոտենալու մասին**
3. Ցույց են տալիս ճանապարհի վտանգավոր շրջադարձի ուղղությունը

Պատ.՝ 2

---

16. **Գծանշման այս գծերից ո՞րն է օգտագործվում դարձափոխային երթեւեկությամբ գոտիները նշելու համար:**



1. 1-ին գիծը
2. **2-րդ գիծը**
3. 3-րդ գիծը
4. 2-րդ եւ 3 -րդ գծերը
5. 3-րդ եւ 4 -րդ գծերը

Պատ.՝ 2

---

17. **Որտե՞ղ է գծվում կանգառը եւ կայանումն արգելող տեղերը նշող դեղին հոծ գիծը:**




1. Երթեւեկելի մասի վրա
2. Երթեւեկելի մասի եզրի մոտ
3. **Երթեւեկելի մասի եզրի մոտ կամ եզրաքարի վերին մակերեսին**
4. Միայն եզրաքարի վերին մակերեսին

Պատ.՝ 3

---

18. **Ճանապարհային նշաններից որի՞ հետ կարող է կիրառվել դեղին գույնի ընդհատվող գծանշումը:**



1. «Կանգառն արգելվում է»
2. **«Կայանելն արգելվում է»**
3. «Կայանելն արգելվում է ամսվա կենտ օրերին»

Պատ.՝ 2

---

19. **Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում երթեւեկել երթեւեկելի մասի աջ գոտիով:**



1. Բոլոր մեխանիկական տրանսպորտային միջոցներին
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին եւ տաքսիներին
3. Միայն հեծանիվներին
4. **Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին**

Պատ.՝ 4

---


20. Այս ճանապարհային գծանշումն ունի հետեւյալ նշանակությունը:



1. Ցույց է տալիս մայթամերձ կայանման տեղերը, որտեղ նշված են մեխանիկական տրանսպորտային միջոցների կանգնեցման ձեւերը
2. Ցույց է տալիս այն տեղերը, որտեղ արգելվում է մեխանիկական տրանսպորտային միջոցների կանգառը
3. **Ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերը եւ տաքսիների կայանման վայրերը**

Պատ.՝ 3

21. Այս հորիզոնական ճանապարհային գծանշումը ցույց է տալիս



1. Երթեւեկելի մասի նեղացումը, որտեղ նվազում է երթեւեկության գոտիների քանակը տվյալ ուղղությամբ:
2. **Այն տեղը, որտեղ վարորդը պետք է անհրաժեշտության դեպքում կանգ առնի՝ հատվող ճանապարհով երթեւեկող տրանսպորտային միջոցներին ճանապարհը զիջելու համար:**
3. Մոտեցում դեպի կանգառն արգելված տեղին:

Պատ.՝ 2

22. **Թույլատրվու՞մ է արդյոք մուտք գործել սպիտակ լայն գծերով նշված ուղղորդ կղզյակ:**



1. Թույլատրվում է միայն կանգառ կատարելու համար
2. Թույլատրվում է հետընթացի ժամանակ
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---


23. **Ինչպե՞ս պետք է վարվի վարորդը՝ մոտենալով խաչմերուկին՝ «Կանգ - գիծ» գծանշման եւ լուսացույցի կանաչ ազդանշանի պայմաններում:**

1. Կանգ առնի «Կանգ-գծի» մոտ, որից հետո վերսկսի երթեւեկությունը
2. **Շարունակի երթեւեկությունը խաչմերուկով՝ առանց կանգառի**

Պատ.՝ 2

---

24. **Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:**




1. Հետիոտնային անցում
2. **Այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է ճանապարհի երթեւեկելի մասը**
3. Անասուններ քշելու համար նախատեսված տեղ

Պատ.՝ 2

---

25. **Վարորդը որտե՞ղ պետք է կանգնեցնի տրանսպորտային միջոցն այս գծանշման առկայության դեպքում:**




1. **Գծանշման մոտ**
2. Գծանշման վրա
3. Գծանշումից ոչ պակաս, քան 5մ հեռավորության վրա

Պատ.՝ 1

---

26. **Ի՞նչ է նշանակում այս գծանշումը:**




1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար նախատեսված երթեւեկության գոտի
2. Հատուկ նշանակության ավտոմոբիլների համար նախատեսված երթեւեկության գոտի
3. **Ցույց է տալիս երթեւեկության այն գոտիների սահմանները, որտեղ իրականացվում է դարձափոխային կարգավորում**

Պատ.՝ 3

---


27. Թույլատրվու՞մ է արդյոք նշված վայրում հետադարձ կատարել:



1. Թույլատրվում է
2. Արգելվում է

Պատ.՝ 1

28. Թույլատրվու՞մ է արդյոք տվյալ գծանշման առկայության դեպքում զբոսաշրջության երթուղով ընթացող ավտոբուսի վարորդին մուտք գործել «A» գծանշումով գոտի:



1. Թույլատրվում է
2. Արգելվում է

Պատ.՝ 1

29. Ի՞նչ է ցույց տալիս ընդհատվող լայն գծի տեսքով գծանշումը:



1. Երթեւեկելի մասի եւ կողնակի միջեւ առկա սահմանը
2. **Երթեւեկելի մասի հիմնական գոտու եւ թափառքի գոտու միջեւ առկա սահմանը**
3. Երթեւեկելի մասի հիմնական գոտու եւ արգելակման գոտու միջեւ առկա սահմանը

Պատ.՝ 2


30. Ո՞ր ավտոմոբիլին է թույլատրվում կանգառ կատարել այս նշանների ազդման գոտում:



1. Կարմիրին
2. Երկու ավտոմոբիլներին էլ
3. Ոչ մեկին
4. **Դեղինին՝ «Հաշմանդամ» ճանաչման նշանով կահավորված**

Պատ.՝ 4

31. Ո՞ր նկարում է վարորդը ճիշտ կատարել կանգառ՝ ուղեւորներ իջեցնելու համար:



1. **Ձախ նկարում**
2. Երկու նկարներում Էլ
3. Աջ նկարում

Պատ.՝ 1

---

32. Որպես գնացքի կանգառի ազդանշան ծառայում է

1. **Ձեռքի շրջանաձեւ շարժումը (ցերեկը՝ վառ գույնի լաթով կամ որեւէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով):**
2. Սկավառակով կամ կարմիր դրոշակով գլխավերեւ բարձրացված ձեռքը:
3. Առաջ պարզած ձեռքը:
4. Վեր եւ վար ճոճվող՝ առաջ պարզած ձեռքը:

Պատ.՝ 1

---

33. Բնակավայրերում, յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթեւեկելի գոտի ունեցող եւ մեջտեղում տրամվայի գծեր չունեցող ճանապարհների ձախ կողմում կանգառն ու կայանումը

1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---


34. «Կանգ-գծից» կամ «Երթեւեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանից ի՞նչ հեռավարության վրա պետք է կանգնեցվի տրանսպորտային միջոցը՝ մոտեցող գնացքին ճանապարհը զիջելու համար:

1. 1,5 մ
2. 2,5 մ
3. 5 մ
4. 10 մ
5. **Անմիջապես «Կանգ-գծի» եւ (կամ) նշանի մոտ**

Պատ.՝ 5

---

35. **Թույլատրվու՞մ է արդյոք կանգառը նշված տեղում:**



1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---

36. **Թույլատրվու՞մ է արդյոք ավտոմոբիլի կանգառն այս վայրում:**




1. Արգելվում է, քանի որ գծանշման ընդհատվող գծի եւ կանգ առած տրանսպորտային միջոցի միջեւ հեռավորությունը պակաս է 3 մետրից
2. Արգելվում է ամսվա զույգ օրերին
3. **Թույլատրվում է**

Պատ.՝ 3

---

37. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է խախտել կայանման կանոնները:**



1. Կապույտ ավտոմոբիլի վարորդը
2. Կարմիր ավտոմոբիլի վարորդը
3. **Երկու վարորդներն էլ խախտել են**
4. Երկու վարորդներն էլ չեն խախտել

Պատ.՝ 3

---


38. **Բնակավայրերից դուրս որտե՞ղ է թույլատրվում երկարատեւ հանգստի, գիշերակացի եւ այլ նպատակներով կայանելը:**

1. Ճանապարհի կողնակներին
2. **Կայանման համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս**
3. Ճանապարհի երթեւեկելի մասի աջ կողմում՝ չխոչընդոտելով այլ տրանսպորտային միջոցների երթեւեկությունը
4. Ճանապարհի ձախ կողմում՝ ապահովելով ճանապարհային երթեւեկության անվտանգությունը

Պատ.՝ 2

---

39. **Կանգառն արգելվում է, եթե հոծ գծի եւ կանգնած տրանսպորտային միջոցի միջեւ տարածությունը կազմում է**



1. 6 մ:
2. 5.5 մ:
3. 4 մ:
4. 3.5 մ:
5. **2.5 մ:**

Պատ.՝ 5

---

40. **Եթե երկաթուղային գծանցով երթեւեկությունը արգելված է, եւ բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշանները, գծանշումն ու ուղեփակոցը, ապա վարորդը պետք է կանգնի**

1. Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա:
2. Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 7 մ հեռավորության վրա:
3. **Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 10 մ հեռավորության վրա:**

Պատ.՝ 3

---

41. **Ի՞նչ հեռավորության վրա է արգելվում տրանսպորտային միջոցների կայանումը երկաթուղային գծանցներից:**

1. **15 մ**
2. 50 մ
3. 100 մ
4. 150 մ

Պատ.՝ 1

---

42. **Ո՞ր պատասխանում են ճիշտ թվարկած կանգառի կանոնները խախտած վարորդները:**




1. Կարմիր ավտոմոբիլի եւ մոտոցիկլի վարորդները
2. Կապույտ ավտոմոբիլի վարորդը
3. Մոտոցիկլի վարորդը
4. **Բոլոր տրանսպորտային միջոցների վարորդները**

Պատ.՝ 4

---

43. **Ո՞ր տրանսպորտային միջոցների վարորդներն են սխալ կանգառ կատարել ուղեւորներ իջեցնելու համար:**



1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը
2. Մոտոցիկլի վարորդը
3. Ավտոբուսի վարորդը
4. **Մոտոցիկլի և ավտոբուսի վարորդները**
5. Բոլոր վարորդները

Պատ.՝ 4

---

44. **Եթե երկաթուղային գծանցով երթեւեկությունն արգելված է, եւ բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշաններն ու գծանշումը, ապա վարորդը պետք է կանգնի**

1. **Ուղեփակոցից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա:**
2. Ուղեփակոցից ոչ պակաս, քան 3 մ հեռավորության վրա:
3. Ուղեփակոցից անմիջապես առաջ:

Պատ.՝ 1

---

45. **Թույլատրվու՞մ է զբոսաշրջային ավտոբուսին երթևեկել «A» գծանշմամբ գոտիով:**



1. **Արգելվում է:**
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

---

46. **Ի՞նչ է նշանակում երթեւեկելի մասի գոտում գծանշված «A» տառը:**




1. Ճանապարհի (երթուղու) համարը
2. **Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթեւեկության համար նախատեսված հատուկ գոտի**
3. „A" կարգի տրանսպորտային միջոցների երթեւեկության համար նախատեսված հատուկ գոտի

Պատ.՝ 2

---

47. **Տրանսպորտային միջոցին թույլատրվու՞մ է կանգնել նշված տեղում ուղեւորներ իջեցնելու համար:**




1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է՝ բայց մայթին բարձրանալով

Պատ.՝ 2

---

48. **Թույլատրվու՞մ է շարունակել երթեւեկությունը սլաքով նշված ուղղությամբ:**



1. Արգելվում է
2. Թույլատրվում է բոլոր դեպքերում
3. **Թույլատրվում է՝ ուղեւորներ իջեցնելու նպատակով կանգառ կատարելու համար**
4. Թույլատրվում է՝ բեռնատար ավտոմոբիլին վազանցելու նպատակով

Պատ.՝ 3

---

49. **Այսպիսի ուղղանիգ գծանշմամբ նշվում են**



1. **Կամրջի, թունելի ստորին եզրերը:**
2. Չլուսավորված թունելների մուտքը:
3. Ճանապարհային շինությունների ցանկացած տարր, որը վտանգ է ստեղծում երթեւեկության համար:

Պատ.՝ 1

---

50. **Ավտոբուսի վարորդը կատարել է կանգառ ուղեւորներ նստեցնելու նպատակով: Թեթեւ մարդատար ավտոմոբիլը երթեւեկում է 70կմ/ժ արագությամբ: Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է խախտում ճանապարհային երթեւեկության կանոնների պահանջները:**



1. **Ոչ ոք**
2. Ավտոբուսի վարորդը
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը
4. Երկու վարորդներն էլ

Պատ.՝ 1

---

51. **Թվարկվածներից ո՞ր դեպքում կարող է ավտոբուսի վարորդն անցնել երկկողմ երթևեկության եռագոտի ճանապարհի մեջտեղի գոտի, որն օգտագործվում է երկու ուղղությամբ երթևեկության համար:**



1. Վազանցելու կամ շրջանցելու նպատակով:
2. Ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու նպատակով:
3. **Վերոնշյալ երկու դեպքում էլ:**
4. Ոչ մի պատասխանը ճիշտ չէ:

Պատ.՝ 3

---

52. Որտե՞ղ պետք է կանգ առնի վարորդը տվյալ իրավիճակում:



1. Կանգառը պարտադիր չէ
2. Լուսացույցի առջեւ
3. **«Կանգ-գիծ» գծանշման առջեւ**
4. Երթեւեկելի գոտիների հատման առջեւ

Պատ.՝ 3

---


53. Թույլատրվու՞մ է կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսի վարորդին ուղևորներ նստեցնելու նպատակով կանգառ կատարել նշված վայրում:



1. **Արգելվում է:**
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

54. Զբոսաշրջային ավտոբուսի վարորդը երկարատև հանգստի նպատակով իրավունք ունի՞ կանգ առնել նշված վայրում:



1. **Իրավունք չունի:**
2. Իրավունք ունի:

Պատ.՝ 1

---

55. Դեպի ձախ երթեւեկությունը շարունակելու համար որտե՞ղ պետք է կանգ առնի ավտոբուսի վարորդը ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին զիջելու համար:



1. Ճանապարհային նշանի առջեւ
2. **Գծանշման մոտ**
3. Վարորդի հայեցողությամբ անվտանգ տեղում

Պատ.՝ 2

56. **Տվյալ իրավիճակում որտե՞ղ պետք է կանգ առնել:**



1. Առաջին ճանապարհային նշանի մոտ
2. **«Կանգ-գիծ» գծանշման առջեւ**
3. Երկրորդ ճանապարհային նշանի մոտ
4. Կանգառը պարտադիր չէ

Պատ.՝ 2

---

57. **Տվյալ նշանի ազդեցության գոտում ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում կանգառ կատարել:**



1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին
2. Միայն հաշմանդամների կողմից ղեկավարվող տրանսպորտային միջոցներին
3. Միայն միացված հաշվիչով տաքսիներին
4. **Բոլորին արգելվում է**

Պատ.՝ 4

---

58. Տվյալ ճանապարհային նշանների ազդման գոտում թույլատրվու՞մ է կանգառ կատարել՝ ուղեւորներ նստեցնելու նպատակով:



1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

59. Ո՞ր տրանսպորտային միջոցների համար է առանձնացված «A» տառով գծանշված գոտին:



1. Միայն ավտոբուսների համար, որոնք շարժվում են սահմանված երթուղով
2. Տրոլեյբուսների եւ տաքսիների համար
3. **Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար**

Պատ.՝ 3

---

60. Թույլատրվու՞մ է ավտոբուսների կանգառն ու կայանումը բնակավայրերում երթևեկելի մասի ձախ կողմում՝ միակողմ երթևեկության ճանապարհներին:

1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է միայն կանգառ կատարելու համար:

Պատ.՝ 1

---

61. Կանգառի կետերի տարածքից դուրս թույլատրվու՞մ է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին կանգառ կատարել:

1. **Արգելվում է:**
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

---

62. **Թույլատրվու՞մ է ավտոբուսների կայանումը բնակելի գոտիներում եւ բակային տարածքներում:**

1. Արգելվում է:
2. **Թույլատրվում է՝ դրա համար նախատեսված տեղերում:**
3. Թույլատրվում է:

Պատ.՝ 2

---

63. **Թո՞ւյլատրվում է կանգառը նշված վայրում:**



1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---

64. **Թույլատրվո՞ւմ է կայանումն այս իրավիճակում:**




1. Այո
2. Միայն օրվա լուսավոր ժամերին
3. **Ոչ**

Պատ.՝ 3

---

65. Ո՞ր վայրում է թույլատրվում կանգառ կատարել:



1. Միայն B
2. **Միայն A և B**
3. Միայն A և C
4. Ոչ մի վայրում

Պատ.՝ 2

---

66. Թույլատրվու՞մ է կանգառ կատարել նշված վայրում:



1. Այո
2. **Արգելվում է**
3. Միայն ուղևոր նստեցնելու նպատակով

Պատ.՝ 2

---

67. Նշված իրավիճակում ուղևոր նստեցնելու նպատակով կանգառ թույլատրվու՞մ է:




1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

68. Նշվածներից ո՞ր դեպքում է թույլատրվում կանգառ կատարել:



1. **Միայն B**
2. Միայն C
3. A և C
4. Բոլոր դեպքերում

Պատ.՝ 1

---

69. Կանգառն արգելվում է

1. **Երկաթուղային գծանցում:**
2. Երկաթուղային գծանցում և 50մ գծանցին մոտ:
3. Երկաթուղային գծանցում և 50մ գծանցից առաջ:

Պատ.՝ 1

---


70. Կայանումն արգելվում է

1. Երկաթուղային գծանցում:
2. **Երկաթուղային գծանցում և 50մ գծանցին մոտ:**
3. Երկաթուղային գծանցում և 50մ գծանցից առաջ:

Պատ.՝ 2

---

71. Ո՞ր տարբերակում է նշված ճիշտ կանգառ կատարողը:



1. **Միայն C**
2. Միայն A և C
3. Միայն B և C
4. Երեք դեպքերում էլ

Պատ.՝ 1

---

72. Պարտավո՞ր եք արդյոք զիջել բեռնատարին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2

73. Ե՞րբ է թույլատրվում հատել գծանշումը:



1. Հետիոտնային անցումից առաջ
2. Հետիոտնային անցումից հետո

Պատ.՝ 2


74. Նշված իրավիճակում թույլատրվու՞մ է արդյոք կանգառ կատարել ուղևոր նստեցնելու նպատակով:



1. Այո
2. Թույլատրվում է միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի վարորդին
3. Ոչ

Պատ.՝ 2


75. Թույլատրվո՞ւմ է նշված վայրում կանգառ կատարել:



1. Միայն ուղևոր իջեցնելու նպատակով
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

76. Նշված վայրերից որտե՞ղ կարելի է կայանում կատարել:



1. Միայն A
2. Միայն C
3. **A կամ C**

Պատ.՝ 3

77. Թույլատրվո՞ւմ է կանգառ կատարել նշված վայրում:



1. **Ոչ**
2. Այո

Պատ.՝ 1

78. Թույլատրվու՞մ է արդյոք կայանումը նշված վայրում:



1. Արգելվում է
2. Թույլատրվում է

Պատ.՝ 1


79. Թույլատրվո՞ւմ է կամրջի վրա կանգառ կատարել ուղևոր նստեցնելու նպատակով:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2


80. Ո՞ր վարորդն է ճիշտ կատարել կանգառը:



1. Միայն C
2. B կամ C
3. Բոլոր վարորդները

Պատ.՝ 1


81. Թույլատրվու՞մ է կանգառ կատարել նշված վայրում:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2


82. Նշվածներից ո՞ր վայրում է թույլատրվում կանգառ կատարել:



1. Միայն A
2. Միայն B
3. Ցանկացած:

Պատ.՝ 1


83. Կանգառ կատարելը նշված վայրում



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է՝ ուղևոր նստեցնելու նպատակով:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3

84. Նշվածներից ո՞ր դեպքում է թույլատրվում կանգառը:



1. Միայն C
2. Միայն B և C
3. **Բոլոր դեպքերում**

Պատ.՝ 3

---

85. Թույլատրվու՞մ է արդյոք բեռնատարից առաջ անցնելուց հետո շարունակել երթևեկությունն այս գոտիով:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

86. Թույլատրվո՞ւմ է այս իրավիճակում շարունակել երթևեկությունը զբաղեցրած գոտիով:



1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

87. Կանգառը նշված վայրում



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե տրանսպորտային միջոցից մինչև գծանշում ընկած հեռավորությունը 3 մետրից ավել է:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

88. Այս գծանշումը ցույց է տալիս



1. Առավելությունը՝ վերադասավորման ժամանակ:
2. Ճանապարհի կորագիծ հատվածին մոտեցումը:
3. **Գոտու վերջին մոտենալը:**

Պատ.՝ 3

---

89. Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:



1. «Կանգ-գիծ» նշանին մոտենալը կարգավորվող խաչմերուկում
2. **«Կանգ-գիծ» գծանշմանը մոտենալը, երբ այն կիրառվել է«Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանի հետ**
3. Ուղեփակոցին մոտենալը

Պատ.՝ 2

---

90. Ցանկապատերի ուղղահայաց գծանշումը տեղեկացնում է



1. Երկաթուղային գծանցին մոտենալու մասին:
2. Վտանգավոր խաչմերուկին մոտենալու մասին:
3. **Ճանապարհի վտանգավոր հատվածով երթևեկության մասին:**

Պատ.՝ 3

---

91. Այս եռանկյունաձև գծանշումը տեղեկացնում է



1. Վտանգավոր շրջադարձին մոտենալու մասին:
2. **Ճանապարհը զիջելու տեղին մոտենալու մասին:**
3. Մեքենան կանգնեցնելու տեղին մոտենալու մասին:

Պատ.՝ 2

---

92. Այս ընդհատվող գծանշումները խաչմերուկի տարածքում ցույց են տալիս



1. Երթևեկության թույլատրելի ուղղությունները:
2. **Երթևեկության գոտիները խաչմերուկի սահմաններում:**

Պատ.՝ 2

---

93. Այս գծանշմամբ վազանցը



1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է միայն տրակտորներին վազանցել:

Պատ.՝ 1

---

94. Այս ուղղանիգ գծանշմամբ



1. Նշվում են երթևեկելի մասին հարակից բոլոր ուղղահայաց տարրերը:
2. **Ճանապարհային կառույցների միայն այն տարրերը, որոնք վտանգ են ներկայացնում վարորդների համար:**

Պատ.՝ 2

---

95. Այս գծանշման դեպքում կարելի է մուտք գործել խաչմերուկ, եթե դա չի խոչընդոտի թեթև մարդատարի վարորդին



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

96. Ո՞ր դեպքում է թույլատրվում հատել հոծ գծանշումը:



1. **Միայն B՝ կանգառ կատարելիս**
2. Ոչ մի դեպքում
3. Կանգառ կատարելիս երկու դեպքերում Էլ

Պատ.՝ 1

---

97. Ի՞նչ է ցույց տալիս ընդհատվող գծանշումը:




1. Կողնակին կանգառ կատարելու իրավունքը
2. **Երթևեկելի մասի եզրերը երկգոտի ճանապարհին**
3. Կողնակով երթևեկելու իրավունքը

Պատ.՝ 2

---

98. Այս հետագծով երթևեկել նման իրավիճակում



1. Թույլատրվում է՝ միայն վազանցելիս:
2. Թույլատրվում է:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3

99. Թույլատրվո՞ւմ է կայանել նշված վայրում:



1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է՝ առանց մայթին բարձրանալու
3. Արգելվում է

Պատ.՝ 3

100. Այս գծանշման դեպքում վազանցը



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե առջևից ընթացող տրանսպորտային միջոցը դանդաղընթաց է:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3

101. Կարո՞ղ եք շարունակել երթևեկությունը նշանից հետո:



1. Այո
2. Այո՝ մինչև Կանգ-գիծը
3. Ոչ

Պատ.՝ 2

---


102. Երբ նարնջագույն և սպիտակ գծանշումները իրար հակասում են, վարորդները

1. Կարող են կատարել իրենց հարմար գծանշման պահանջները:
2. Պետք է կատարեն սպիտակ գծանշման պահանջները:
3. Պետք է կատարեն նարնջագույն գծանշման պահանջները:

Պատ.՝ 3

---

103. Ո՞ր վարորդին է թույլատրվում հատել հոծ գծանշումը՝ կանգառ կատարելու դեպքում:




1. Երկու վարորդներին էլ
2. Հանդիպակացից երթևեկող վարորդին
3. Երկու վարորդներին արգելվում է

Պատ.՝ 2

---


104. Թույլատրվո՞ւմ է կանգառ կատարել նշված վայրում:



1. Միայն մոտոցիկլներին
2. Ոչ
3. **Այո**

Պատ.՝ 3

105. Այս գծանշումը



1. Ցույց է տալիս բնակելի գոտու սահմանները:
2. **Ցույց է տալիս արհեստական անհարթությունը:**
3. Արգելում է հետագա երթևեկությունը:

Պատ.՝ 2

106. Այս գծանշումն արգելում է



1. Վազանցը:
2. Շրջանցումը:
3. Հետադարձը:
4. **Երթևեկությունը դրանից ձախ կամ դրա վրայով:**

Պատ.՝ 4

107. Այս գծանշումը ցույց է տալիս



1. Երթուղու կամ ճանապարհի համարը:
2. Առաջարկվող արագությունը:
3. **Թույլատրելի առավելագույն արագությունը նշված ճանապարհահատվածում:**

Պատ.՝ 3

---

108. Երթևեկելի մասում արված գրառումը ցույց է տալիս




1. Հեռավորությունը մոտակա խաչմերուկից:
2. Հեռավորությունը մոտակա բնակավայրից;
3. **Ճանապարհի կամ երթուղու համարը:**

Պատ.՝ 3

---

109. Ո՞ր կողմից կարելի է շրջանցել արգելքը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 1

---


110. Ո՞ր տրանսպորտային միջոցները կարող են երթևեկել այս ճանապարհի աջ եզրային գոտով:



1. **Տրոլեյբուսներն ու ընդհանուր օգտագործման ավտոբուսները**
2. Տրոլեյբուսներն ու ավտոբուսները
3. Միայն ավտոբուսները

Պատ.՝ 1


111. Թո՞ւյլատրվում է կայանել նշված վայրում:



1. **Արգելվում է**
2. Միայն մայթին
3. Միայն մոտոցիկլներին
4. Թույլատրվում է

Պատ.՝ 1

112. Ընդհատվող գծանշման գծիկների մեծացումը հայտնում է



1. գոտու վերջին մոտենալու մասին:
2. վտանգավոր հատվածին մոտենալու մասին:
3. **Որ այդ գծանշումը շուտով հոծ է դառնալու:**

Պատ.՝ 3

113. Նշված իրավիճակում ուղիղ երթևեկելն



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:
3. **Թույլատրվում է՝ աջ գոտի վերադասավորվելով:**

Պատ.՝ 3

---

114. Քանի՞ երթևեկության գոտի ունի այս ճանապարհը:



1. Երկու
2. **Չորս**

Պատ.՝ 2

---

115. Որտե՞ղ է թույլատրվում ուղևորներին սպասել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:

1. **Միայն երթևեկելի մասից բարձրացված սպասահարթակների վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ մայթերին կամ կողնակներին**
2. Երթևեկելի մասի եզրին, եթե տրանսպորտային միջոցն արդեն երևում է հորիզոնում:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

116. Ե՞րբ է թույլատրվում ուղևորներին դուրս գալ երթևեկելի մաս՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց նստելու համար:

1. Երբ տրանսպորտային միջոցը մոտենում է կանգառին և դանդաղեցնում է ընթացքը:
2. **Միայն տրանսպորտային միջոցի լիովին կանգ առնելուց հետո**
3. Երբ բացվում են տրանսպորտային միջոցի դռները

Պատ.՝ 2

---

117. **Ե՞րբ պետք է ուղևորն ազատի երթևեկելի մասն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցից իջնելուց հետո:**

1. Երբ տրանսպորտային միջոցը սկսում է շարժվել
2. Երբ տրանսպորտային միջոցի վարորդը փակում է դռները
3. **Անհապաղ**

Պատ.՝ 3

---

118. **Թույլատրվու՞մ է տրոլեյբուսի վարորդին կանգառ կատարել «Տրամվայի կանգառի տեղ» նշանով նշված կանգառում:**



1. Թույլատրվում է, եթե տվյալ պահին տրամվայ չկա և տրոլեյբուսը չի խանգարում այլ տրանսպորտային միջոցների երթևեկությանը
2. Թույլատրվում է միայն այն դեպքում, եթե տրամվայի գծերը տեղադրված են ճանապարհի աջ եզրին տրոլեյբուսի ընթացքի ուղղությամբ
3. **Արգելվում է**
4. Թույլատրվում է բոլոր դեպքերում

Պատ.՝ 3

---

119. **Թույլատրվու՞մ է տրոլեյբուսի վարորդին կանգառ կատարել այս նշանով կահավորված կանգառում:**



1. Արգելվում է, քանի որ այն նախատեսված է միայն ավտոբուսների համար
2. **Թույլատրվում է**
3. Վարորդի հայեցողությամբ

Պատ.՝ 2

---

120. **Թույլատրվու՞մ է այլ տրանսպորտային միջոցների վարորդներին կայանել «Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ» նշանով նշված տարածքում:**



1. Թույլատրվում է միայն գիշերային ժամերին, երբ տաքսիների հոսքը փոքր է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է միայն շաբաթ, կիրակի և տոն օրերին

Պատ.՝ 2

---

121. **Ո՞րն է «Կայանման սահմանափակումով գոտի» նշանի հիմնական առանձնահատկությունը սովորական արգելող նշանների նկատմամբ:**



1. Այն արգելում է թե՛ կայանումը, թե՛ կանգառը ցանկացած նպատակով
2. Այն վերաբերվում է միայն բեռնատար ավտոմոբիլներին
3. **Այն տարածվում է ճանապարհի ամբողջ լայնությամբ (երկու կողմերի վրա) և չի ընդհատվում խաչմերուկով**

Պատ.՝ 3

---

122. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կայանել այս նշանի գործողության գոտում՝ խաչմերուկն անցնելուց անմիջապես հետո:**



1. Այո, քանի որ խաչմերուկն անցնելուց հետո բոլոր սահմանափակող նշանները կորցնում են իրենց ուժը
2. Այո, եթե ավտոբուսն ընդհանուր օգտագործման է
3. **Ոչ, քանի որ նշանի պահանջը չի ընդհատվում խաչմերուկով**

Պատ.՝ 3

---

123. **Այս նշանի ազդեցության տարածքում թույլատրվու՞մ է ընդհանուր օգտագործման ավտոբուսի վարորդին կանգառ կատարել ուղևորների նստեցման կամ իջեցման նպատակով:**



1. Ոչ, քանի որ գոտում արգելված է կայանումը
2. **Այո, թույլատրվում է**

Պատ.՝ 2

---

124. **Ավտոբուսի վարորդը տեսնում է այս նշանը ճանապարհի աջ կողմում, երբ ճանապարհը գտնվում է բնակավայրում, ունի յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի և մեջտեղում չկան տրամվայի գծեր: Թույլատրվու՞մ է նրան կայանել ճանապարհի ձախ կողմում:**




1. Այո, քանի որ նշանը տեղադրված է աջ կողմում և գործում է միայն աջ կողմի համար
2. **Չի թույլատրվում**

Պատ.՝ 2

---

125. **Թույլատրվու՞մ է ներքին այրման շարժիչով աշխատող ավտոբուսի վարորդին կայանել այս նշանով կահավորված կայանատեղիում:**




1. **Չի թույլատրվում**
2. Թույլատրվում է, եթե կայանումը չի գերազանցում 5 րոպեն
3. Թույլատրվում է, եթե տվյալ պահին լիցքավորման կայանն ազատ է և Էլեկտրամոբիլներ չկան

Պատ.՝ 1

---

126. Թույլատրվու՞մ է հիբրիդային շարժիչով աշխատող ավտոբուսի վարորդին կայանել այս նշանով կահավորված կայանատեղիում:




1. Թույլատրվում է
2. **Չի թույլատրվում**

Պատ.՝ 2

---

127. Թույլատրվու՞մ է էլեկտրական շարժիչով ավտոբուսի վարորդին կայանել այս նշանով կահավորված կայանատեղիում, եթե ավտոբուսը միացված չէ լիցքավորման սարքին:



1. **Չի թույլատրվում**
2. Թույլատրվում է

Պատ.՝ 1

---

128. Ո՞ր տրանսպորտային միջոցների վարորդների համար է նախատեսված այս նշանով կահավորված հսկման կետը:



1. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար, որոնք հատում են երկրի պետական սահմանը
2. Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնողների համար

Պատ.՝ 2

---

129. Թույլատրվու՞մ է արտաքին լիցքավորման հնարավորություն չունեցող հիբրիդային ավտոմոբիլի վարորդին կայանել այս նշանի ազդեցության տարածքում:



1. Այո, քանի որ հիբրիդային ավտոմոբիլն ունի նաև էլեկտրական շարժիչ
2. Ոչ, նման կայանատեղին նախատեսված է միայն արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորվող ավտոմոբիլների համար:

Պատ.՝ 2

---

130. **Թույլատրվու՞մ է զբոսաշրջային ավտոբուսի վարորդին ուղևոր իջեցնել այն գոտում, որտեղ տեղադրված են այս նշանները:**



1. Այո, եթե վարորդը գտնվում է ղեկի մոտ և կարող է անմիջապես դուրս գալ նշանի ազդման գոտուց:
2. Այո, քանի որ տարհանումը վերաբերվում է միայն թեթև մարդատար ավտոմոբիլներին:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

131. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը ճանապարհի աջ կողմում՝ երթևեկելի մասի եզրին:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է կողնակի բացակայության դեպքում**

Պատ.՝ 2

---

132. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը ճանապարհի աջ կողմում՝ երթևեկելի մասի վրա կողնակի առկայության դեպքում:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---

133. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը ճանապարհի աջ կողմում՝ մայթի վրա:**

1. Թույլատրվում է միայն մասնակի կանգառը
2. Թույլատրվում է, եթե ավտոբուսը փոքր դասի է
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

134. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը երթևեկելի մասի ձախ կողմում՝ բնակավայրից դուրս գտնվող այն ճանապարհներին, որոնք ունեն յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի:**

1. **Արգելվում է**
2. Թույլատրվում է, եթե ճանապարհի աջ կողմում չկա կանգառ կամ կայանման համար անվտանգ տեղ

Պատ.՝ 1

135. **Թույլատրվու՞մ է բնակավայրերում ավտոբուսի կանգառը և կայանումը երթևեկելի մասի ձախ կողմում յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի ունեցող, մեջտեղում տրամվայի գծեր չունեցող ճանապարհներին:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է**

Պատ.՝ 2

---

136. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը բնակավայրից դուրս գտնվող միակողմանի երթևեկությամբ ճանապարհների ձախ կողմում:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---

137. **Բնակավայրում միակողմ երթևեկությամբ ճանապարհներին երթևեկելի մասի ձախ կողմում բեռնելու կամ բեռնաթափելու, ինչպես նաև ուղևորներ նստելու կամ իջնելու համար միայն կանգառ թույլատրվում է**

1. **3.5տ-ից ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին:**
2. Ավտոբուսներին:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

138. **Որտե՞ղ է թույլատրվում ավտոբուսների երկարատև կայանումը (գիշերակացը) բնակավայրերից դուրս:**

1. **Միայն դրանց համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս**
2. Լուսավորված ճանապարհահատվածների կողնակներին՝ երթևեկելի մասից դուրս
3. Եթե վարորդի գնահատմամբ դա անվտանգ կլինի
4. Բոլոր թվարկված դեպքերում:

Պատ.՝ 1

---

139. **Ի՞նչ պետք է ձեռնարկի ավտոբուսի վարորդը կանգառն արգելված վայրում հարկադրական կանգառ կատարելու դեպքում:**

1. Միացնի վթարային լուսային ազդանշանը և սպասի օգնության՝ առանց տրանսպորտային միջոցը տեղաշարժելու
2. **Միացնի վթարային լուսային ազդանշանը, տեղադրի վթարային կանգառի նշանը և ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները տրանսպորտային միջոցն այդ վայրից հեռացնելու համար**
3. Տեղեկացնի ոստիկանությանը և ղեկավարվի վերջինիս հրահանգներով

Պատ.՝ 2

---

140. **Որտե՞ղ է արգելվում ավտոբուսների կանգառը և կայանումը:**

1. Հետիոտնային անցումների վրա և երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրից 15մ-ից պակաս վայրում
2. Հետիոտնային անցումների վրա և երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրից (դեպի երթևեկելի մասեր) 10մ-ից պակաս վայրում
3. Հետիոտնային անցումների վրա և երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրից (դեպի երթևեկելի մասեր) 5մ պակաս վայրում
4. **Թվարկված բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

141. **Որտե՞ղ է արգելվում ավտոբուսների կանգառը և կայանումը:**

1. **Կամուրջների վրա և դրանց տակ**
2. Ճանապարհի բոլոր վայրէջքների վրա
3. Ջրամբարների ափին
4. Թվարկված բոլոր վայրերում:

Պատ.՝ 1

---

142. **Ճանապարհի ո՞ր հատվածներում է արգելվում ավտոբուսի կանգառը և կայանումը:**

1. **Այն վայրերում, որտեղ կանգնած ավտոբուսն այլ վարորդների համար կփակի լուսացույցի ազդանշանները կամ ճանապարհային նշանները**
2. Ցանկացած վերելքի և վայրէջքի վրա
3. Որտեղ առկա է տրանսպորտային միջոցների ինտենսիվ երթևեկություն և հետիոտների տեղաշարժ

Պատ.՝ 1

---

143. **Որտե՞ղ է արգելվում ավտոբուսի կանգառը և կայանումը:**

1. Երթևեկելի մասերի հատումից 15 մետր հեռավորության վրա
2. Տրամվայի գծեր ունեցող բոլոր ճանապարհներին
3. **Երկաթուղային գծանցներում**
4. Նշված բոլոր դեպքերում:

Պատ.՝ 3

---

144. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կանգառը և կայանումը այն տեղերում, որտեղ կանգնած ավտոբուսի և հոծ գծանշման կամ երթևեկելի մասի հակառակ եզրի կամ բաժանարար գոտու միջև հեռավորությունը 3 մետրից պակաս է:**

1. Թույլատրվում է, եթե երթևեկությունը ինտենսիվ չէ և ավտոբուսը չի ստեղծում խցանում
2. Թույլատրվում է, եթե վարորդը գտնվում է ղեկին և անհրաժեշտության դեպքում կարող է անմիջապես տեղաշարժել ավտոբուսը
3. **Արգելվում է**
4. Թույլատրվում է միայն ուղևորների նստեցման և իջեցման նպատակով մինչև 5 րոպե տևողությամբ

Պատ.՝ 3

---

145. **Երկաթուղային գծանցներից ինչ հեռավորության վրա է արգելվում ավտոբուսի կանգառը:**

1. Գծանցից 50 մետր հեռավորության վրա
2. **Անմիջապես երկաթուղային գծանցների վրա**
3. Գծանցից 15 մետր հեռավորության վրա
4. Նշված բոլոր դեպքերում:

Պատ.՝ 2

---

146. **Որտե՞ղ է արգելվում ավտոբուսի կայանումը երկաթուղային գծանցների մոտ:**

1. Երկաթուղային գծանցներից 100մ հեռավորության վրա
2. Երկաթուղային գծանցներից 50 մետրից մոտ հեռավորության վրա
3. Անմիջապես երկաթուղային գծանցի վրա
4. Նշված բոլոր դեպքերում:
5. **2 և 3 դեպքերում**

Պատ.՝ 5

---

147. **Թույլատրվու՞մ է ավտոբուսների կանգառը կամ կայանումը «Ճանապարհի ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհի կողնակներին:**



1. Թույլատրվում է ցանկացած հատվածում, եթե ավտոբուսն ամբողջությամբ դուրս է գալիս երթևեկելի մասից և կանգնում է կողնակի վրա
2. **Արգելվում է, բացառությամբ հարկադրական կանգառի դեպքերի**

Պատ.՝ 2

---

148. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի կայանումը բնակելի գոտիներում՝ դրա համար նախատեսված և նշաններով կահավորված ու գծանշված տեղերից դուրս:**



1. Արգելվում է, քանի որ բնակելի գոտում կայանելու իրավունք ունեն միայն տվյալ տարածքի բնակիչներին պատկանող թեթև մարդատար ավտոմոբիլները
2. Թույլատրվում է բոլոր ավտոբուսներին
3. **Թույլատրվում է միայն միկրոավտոբուսներին**

Պատ.՝ 3

---

149. **Թույլատրվու՞մ է ավտոբուսների կայանումը բակային տարածքներում:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է՝ դրա համար նախատեսված վայրերում**
3. Թույլատրվում է

Պատ.՝ 2

---

150. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդի կանգառը նշված ձևով այս նշանների ազդման գոտում:**



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

151. Կանգառ կատարել նշված վայրում աբտոբուսների վարորդներին թույլատրվում է




1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսանալու դեպքում:
2. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց չհանդիսանալու դեպքում:
3. **Բոլոր դեպքերում արգելվում է:**

Պատ.՝ 3

---

152. Կանգառ կատարելն ավտոբուսի վարորդին այս իրադրության դեպքում թույլատրվում է




1. Միայն աջ կողմում:
2. Միայն ձախ կողմում:
3. **Երկու կողմում:**

Պատ.՝ 3

---

153. Թույլատրվու՞մ է արդյոք զբոսաշրջային ավտոբուսի վարորդին կանգառ կատարել նշված վայրում, եթե հեռավորությունը մինչև հետիոտնային անցում 3մետր է:




1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

154. Ո՞ր վարորդն է խախտել կանգառ կատարելու կանոնները:



1. Ավտոբուսի վարորդը
2. Մոտոցիկլի վարորդը
3. Ոչ մեկը
4. **Երկու վարորդները**

Պատ.՝ 4

---

155. Ավտոբուսների կայանումը արգելվում է

1. Երթևեկելի մասի եզրին՝ կողնակի բացակայության դեպքում:
2. **Բնակավայրից դուրս՝ «Գլխավոր ճանապարհ» ճանապարհային նշանով նշված ճանապարհների երթևեկելի մասի վրա:**
3. Հատվող երթևեկելի մասերի եզրից 10մ հեռավորության վայրում:

Պատ.՝ 2

---

156. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին թույլատրվու՞մ է կանգառի կետերից դուրս կանգառ կատարել:

1. Թույլատրվում է՝ ուղևորի պահանջի դեպքում
2. **Թույլատրվում է՝ հարկադրված կանգառի դեպքում**

Պատ.՝ 2

---

157. Այս նշանի առկայության դեպքում կանգառը թույլատրվում է



1. Միայն ավտոբուսներին:
2. **Ավտոբուսներին և (կամ) տրոլեյբուսներին:**
3. Միայն տրոլեյբուսներին:

Պատ.՝ 2

---

158. Այս նշանի առկայության դեպքում կանգառը թույլատրվում է



1. Ավտոբուսներին և (կամ) տրոլեյբուսներին:
2. **Միայն տրամվայներին:**
3. Տրամվայներին և տրոլեյբուսներին:

Պատ.՝ 2

---

159. Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին ուղևոր վերցնելու համար կանգառ կատարել կամրջի վրա:




1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է միայն «D1» ենթակարգի ավտոբուսներին
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

160. Ո՞ր ավտոբուսի վարորդն է խախտել կայանման կանոնները:




1. Միայն կանաչ ավտոբուսի վարորդը
2. **Միայն դեղին ավտոբուսի վարորդը**
3. Երկու ավտոբուսների վարորդները

Պատ.՝ 2

---

161. **Երթուղային ավտոբուսի վարորդը այս խաչմերուկում ձախ շրջադարձ կատարելուց հետո պետք է կանգառ կատարի սահմանված կետում ուղևորների նստեցման և իջեցման համար: Ո՞ր հետագծով նա պետք է կատարի ձախ շրջադարձը:**



1. Միայն A հետագծով
2. Միայն B հետագծով, քանի որ կանգառի կետը գտնվում է ճանապարհի աջ կողմում
3. **Ցանկացած հետագծով**

Պատ.՝ 3